

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2020

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Հասարակական աշխարհագրության ճյուղերից է.

- 1) կլիմայագիտությունը
- 2) երկրագրությունը
- 3) ջրաբանությունը
- 4) հնեաշխարհագրությունը

2


Երևանի հեռավորությունը հարավային բևեռային շրջագծից կլինի.

- 1) $96,5^\circ$
- 2) $106,5^\circ$
- 3) $116,5^\circ$
- 4) $86,5^\circ$

3

Նկար 1.- ում տրված քարտեզը կազմելու համար ի՞նչ պրոյեկցիա է կիրառվել:

- 1) գլանային
- 2) ազիմուտային
- 3) կոնային
- 4) հասարակածային



նկար 1.

4

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Արեգակի շուրջը երկրագնդի պտտման երկարությունը 940 մլն կմ է:
- 2) Հունիսի 22-ին բևեռային ցերեկ լինում է հարավային բևեռային շրջագծի վրա:
- 3) Մարտի 21-ին առավելագույն ջերմություն ստանում են հասարակածային լայնությունները
- 4) Երկրագնդի առանցքի թեքությունն իր պտտման ուղեծրի հարթության նկատմամբ կազմում է $66,5^\circ$:

5

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Անվանական մասշտաբը պատկերվում է կոտորակի տեսքով:
- 2) Քարտեզում հավասար մթնոլորտային ճնշում ունեցող կետերը միացնող գիծը կոչվում է իզոթերմ:
- 3) Հարաբերական բարձրությունը Երկրի մակերևույթի որևէ կետի բարձրությունն է՝ հաշված ծովի մակարդակից:
- 4) Աղավաղումներն աշխարհագրական քարտեզում ավելի մեծ են, քան հատակագծում:

6

Քարտեզում երկու կետերի հեռավորությունը 6 սմ է, իսկ իրականում՝ 48 կմ:
Այդ քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1: 800 000
- 2) 1: 8 000 000
- 3) 1: 80 000 000
- 4) 1: 80 000

7

Ո՞ր դարաշրջանում է երկրակեղևը կրել ալպյան ծալքավորության ազդեցությունը:

- 1) Կայնոզոյան
- 2) Պրոտերոզոյան
- 3) Պալեոզոյան
- 4) Մեզոզոյան

8

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ուժեղ երկրաշարժի ժամանակ երկրակեղևի ամբողջ տեղամասերի թեկուզ մի քանի մետրով կտրուկ իջեցումը կամ բարձրացումը բացառվում է:
- 2) Հարթավայրեր առաջանում են ջրիկ լավայի արտավիժումների հետևանքով:
- 3) Ծալքաբեկորավոր լեռներում ծալքերը և բեկորներն առաջանում են տեկտոնական շարժումների բացակայության պատճառով:
- 4) Երկրակեղևի օվկիանոսային տիպում բազալտային շերտը բացակայում է:

9

Մթնոլորտում ո՞ր բարձրություններում է տարածվում օզոնի շերտը.

- 1) 30 – 35 կմ
- 2) 35 – 40 կմ
- 3) 40 – 45 կմ
- 4) 25 – 30 կմ

10


Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Քամու միջոցով արտադրվում է էլեկտրաէներգիա:
- 2) Քամիներն առաջացնում են ավազաբլուրներ:
- 3) Քամիներն առաջացնում են ցունամիներ:
- 4) Քամու միջոցով նավարկում են առագաստանավերը:

11

Համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆը պատկերող նկարում n թ տառով է նշված մայրցամաքային ծանծաղուտը.

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա



12

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Կասպից և Արալյան լճերն ունեն տեկտոնական ծագում:
- 2) Գրենլանդիայում և Անտարկտիդայում լայն տարածում ունեն լեռնահովտային սառցադաշտերը:
- 3) Գետի ջրի մակարդակի տատանումը կոչվում է գետի հոսք:
- 4) Ինչքան մեծ լինեն գետի անկումն ու թեքությունը, այնքան մեծ կլինի նրա էներգետիկ կարողությունը:

13

Բնութագրումով որոշել բնական զոնան.

Այս բնական զոնան ունի լավ արտահայտված երկու սեզոն՝ խոնավ, տաք ամառներ, տաք և չոր ձմեռներ: Լայն տարածում ունի Աֆրիկայում և Հարավային Ամերիկայում: Ո՞ր բնական զոնան է.

- 1) սավաննա
- 2) տունդրա
- 3) անապատ
- 4) տափաստան

14

Բարեխառն գոտու փշատերև անտառները հիմնականում n թ հողերի վրա են տարածվում.

- 1) դարչնագույն
- 2) կարմրադեղին
- 3) պոդզոլային
- 4) կարմրագորշ

15 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Անտարկտիդայի արևմուտքում ձգվում է Անտարկտիկական Անդերը:
- 2) Անտարկտիդայի հզոր սառցադաշտերի տակ կան լեռնաշղթաներ, սարահարթեր, հսկայական գոգավորություններ և նույնիսկ իջվածքներ:
- 3) Անտարկտիկայում չկան գործող հրաբուխներ, և չեն լինում երկրաշարժեր:
- 4) Անտարկտիդայի հիմքում ընկած է Անտարկտիկական հնագույն պլատֆորմը:

16 Ո՞ր գույզի կղզիներն են նույն ծովում.

- 1) Սուլավեսի և Ճամայկա
- 2) Հոկայդո և Թայվան
- 3) Սարդինիա և Կորսիկա
- 4) Հոնսյու և Կալիմանտան

17 Հարավային Ամերիկայի ամենաբարձր և ամենացածր կետերի բարձրությունների տարբերությունը կազմում է.

- 1) 6900 մ
- 2) 7000 մ
- 3) 7100 մ
- 4) 6800 մ

18 Ընտրել Հարավային Ամերիկայի բնական զոնաների տեղական անվանումների և բնական զոնայի կամ այն ընդգրկող տարածքի համապատասխանությունների ճիշտ շարքը.

- | | |
|------------|---|
| ա. պարամոս | 1. խոնավ հասարակածային անտառներ |
| բ. պամպա | 2. բարձրալեռնային մարգագետինները Անդերի լեռնաշղթայում |
| գ. սելվաս | 3. սավաննաները Բրազիլական սարահարթում |
| դ. կամպոս | 4. մերձարևադարձային տափաստանները Լա-Պլատայի դաշտավայրի հարավում |

- 1) ա-3, բ-4, գ-1, դ-2
- 2) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 3) ա-2, բ-1, գ-4, դ-3
- 4) ա-2, բ-4, գ-1, դ-3

19 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հյուսիսային Ամերիկայի տունդրայի զոնայում տիրապետող են մամուռներն ու քարաքոսները:
- 2) Կանադական կղզեխմբում ու Գրենլանդիայում առավելապես տարածվում է սառցային զոնան:
- 3) Հյուսիսային Ամերիկայում չկան անապատներ և կիսաանապատներ:
- 4) Կենտրոնական Ամերիկայում, Կարիբյան ծովի կղզիներում տարածվում են խոնավ արևադարձային անտառներ և սավաննաներ:

20 Ատլանտյան օվկիանոս թափվող գետ է.

- 1) Միսիսիպիին
- 2) Կոլորադոն
- 3) Կոլումբիան
- 4) Մակենզին

21 Ո՞ր շարքում *սխալ* կա.

- 1) Տանգանիկա, Նյասա, Շարի—լճեր
- 2) Զամբեզի, Նեդոս, Օրանժ—գետեր
- 3) Դրակոնյան, Կապի, Ատլասի—լեռներ
- 4) Նամիբ, Կալահարի, Սահարա—անապատներ

22 Աֆրիկայի մերձարևադարձային մշտականաչ անտառների ու թփուտների բնական զոնայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հողային ծածկում գերակշռում են շագանակագույն և մոխրագորշ հողերը:
- 2) Տարածված բուսատեսակներն են բաոբաբը, ֆիկուսը, կաուչուկատու հևեան:
- 3) Տարածված կենդանատեսակներն են էմու ջայլամը, դինգո շունը և բադակտուցը:
- 4) Մթնոլորտային տեղումներն առավելապես թափվում են ձմռանը:

23 Եվրասիայի բարեխառն կլիմայական գոտու վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ամենամեծ տարածքը զբաղեցնում է բարեխառն մուսսոնային կլիմայի մարզը:
- 2) Ծովային կլիմայի մարզը բնութագրվում է մեղմ ձմեռով, զով ամառով:
- 3) Ցամաքային կլիմայի մարզում կլիմայի ցամաքայնությունն արևմուտքից արևելք նվազում է:
- 4) Ամենափոքր տարածքը զբաղեցնում է բարեխառն ցամաքային կլիմայի մարզը:

24 Ո՞ր երկիրն է եղել ԽՍՀՄ-ի կազմում.

- 1) Էստոնիան
- 2) Վիետնամը
- 3) Լեհաստանը
- 4) Մոնղոլիան

25 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Քրիստոնեությունը և բուդդայականությունը ազգային կրոններ են:
- 2) Զարգացող երկրներում բարձր են ուրբանիզացման աճի տեմպերը:
- 3) Մեգալոպոլիսները խմբային տարաբնակեցման պարզ ձևեր են:
- 4) Ավստրալիան և Ռուսաստանը խտաբնակ երկրներ են:

26

Երկրի բնակչության թիվը 8 մլն մարդ է, բնակչության միջին խտությունը՝ 160 մարդ/կմ²: Երկրի տարածքը կլինի.

- 1) 40 հազ. կմ²
- 2) 50 հազ. կմ²
- 3) 80 հազ. կմ²
- 4) 20 հազ. կմ²

27

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բրինձը հացահատիկների շարքում ամենաջերմասերն ու խոնավասերն է:
- 2) Եզիպտացորենի հայրենիքը Եգիպտոսն է:
- 3) Վուշը ցրտադիմացկուն և խոնավասեր բույս է, մշակվում է բարեխառն գոտու հյուսիսային լայնություններում:
- 4) Թեյի հայրենիքը Չինաստանն է:

28

Արտադրանքի ծավալով համաշխարհային արդյունաբերության առաջատար ճյուղն է.

- 1) էլեկտրաէներգետիկան
- 2) մետաղաձուլությունը
- 3) թեթև արդյունաբերությունը
- 4) մեքենաշինությունը

29

Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Տարածաշրջանի տնտեսապես ամենազարգացած պետությունը Իսրայելն է:
- 2) Թուրքիայի տնտեսության առաջատար ճյուղը նավթարդյունահանումն է:
- 3) Իրանը և Իրաքը փյունիկյան արմավի մշակությամբ աշխարհի առաջատար երկրներն են:
- 4) Եմենում բացակայում է երկաթուղին

30

Բնութագրումով որոշել երկիրը.

Այս ասիական պետությունն ունի բազմազգ բնակչություն: Բնակչության մեծ մասն ուղղափառ քրիստոնյաներ են: Արդյունաբերության մեջ առաջնային տեղը պատկանում է գյուղատնտեսական հումք մշակող ճյուղերին: Աճեցվող կարևորագույն մշակաբույսերն են թեյը և ցիտրուսային պտուղները: Մակերևույթը լեռնային է, հարուստ է ռելիեֆային ռեսուրսներով:

- 1) Հորդանան
- 2) Վրաստան
- 3) Լիբանան
- 4) Ադրբեջան

31

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Քիմիական արդյունաբերության տեղաբաշխման գործում մեծ է կոմբինացման (համակցման) դերը:
- 2) Քիմիական արդյունաբերության տեղաբաշխման վրա մեծ ազդեցություն ունի էկոլոգիական գործոնը:
- 3) Քիմիական արդյունաբերությունը գերազանցապես տեղաբաշխված է զարգացող երկրներում:
- 4) Քիմիական արդյունաբերության տեղաբաշխման վրա ազդում է ջրատարության գործոնը:



քարտեզ 1

32

Ո՞ր պետությունն է քարտեզ 1-ում նշված Դ տարով.

- 1) Ռումինիա
- 2) Հունգարիա
- 3) Մոլդովա
- 4) Բուլղարիա

33

Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզ 1–ում նշված Ը տառով.

- 1) Հելսինկի
- 2) Ստոկհոլմ
- 3) Ռիգա
- 4) Օսլո

34

Կենտրոնական Ասիա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության միջին խտությունը բարձր է:
- 2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 3) Թեթև արդյունաբերությունը զարգանում է ներկրվող հումքի հաշվին:
- 4) Տրանսպորտային ցանցը խիտ է:

35

Մշակաբույսերից որի՞ մշակությամբ է Չինաստանն աշխարհում գրավում առաջին տեղը.

- 1) բամբակենու
- 2) սուրճի
- 3) արևածաղկի
- 4) կակաոյի

36

Աֆրիկայի ո՞ր երկրները ելք չունեն դեպի ծով.

- 1) Թունիս և Մարոկկո
- 2) Գանա և Մավրիտանիա
- 3) Մոզամբիկ և Տանզանիա
- 4) Նիգեր և Ռուանդա

37

Ավստրալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 2) Բնակչության թվով ամենախոշոր քաղաքը Կանբերան է:
- 3) Ստորերկրյա արտեզյան ջրերի պաշարներով աշխարհի առավել հարուստ երկրներից է:
- 4) Աշխարհի ամենախիտ բնակեցված մայրցամաքներից է:

38

Ամերիկայի Միացյալ Նահանգներին (ԱՄՆ) են պատկանում.

- 1) Սեյշելյան կղզիները
- 2) Հավայան կղզիները
- 3) Կանարյան կղզիները
- 4) Ֆոլկլենդյան կղզիները

39

Լատինական Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Պարանա գետի վրա է կառուցված Իտայպու խոշորագույն ջրէկը:
- 2) Շաքարի արտադրության ծավալով Բրազիլիան աշխարհում առաջինն է:
- 3) Խոշորագույն նավահանգիստներից են Բուենոս Այրեսն ու Ռիո դե ժանեյրոն:
- 4) Նավթի արդյունահանման ծավալով առաջատար երկիր է Չիլին:

40

Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:
- 2) Նավթի հիմնական պաշարները տեղաբաշխված են Կուզբասի, Կանսկ-Աչինսկի ավազաններում:
- 3) Ոսկու արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացած է Կոլա թերակղզում:
- 4) Բնական գազի պաշարներով աշխարհում գրավում է առաջին տեղը:

41


Ի՞նչ ծագման լճեր չկան Հայկական լեռնաշխարհում.

- 1) մնացորդային
- 2) տեկտոնահրաբխային
- 3) փլվածքային
- 4) սառցադաշտային

42

ԼՂՀ (Արցախի Հանրապետություն) ո՞ր վարչական շրջանը և կենտրոնը համանունն չեն.

- 1) Ասկերանի
- 2) Քաշաթաղի
- 3) Հադրութի
- 4) Մարտակերտի



քարտեզ 2

43 Քարտեզ 2-ում Վեդի գետը ո՞ր տառով է նշված.

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա

44 Քարտեզ 2-ում Վաղարշապատ քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Զ
- 2) Է
- 3) Ը
- 4) Ե

45 ՀՀ բնակչության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Եզդիները հիմնականում բնակվում են Սյունիքի մարզում:
- 2) Ազգային կազմով աշխարհի առավել միատարր պետություններից է:
- 3) Ռուսները հիմնականում բնակվում են Վայոց ձորի մարզում:
- 4) Թվաքանակով երկրորդ ազգը ասորիներն են:

46 ՀՀ-ում ուրբանիզացվածության ամենաբարձր մակարդակ ունեցող մարզն է.

- 1) Արարատը
- 2) Արմավիրը
- 3) Շիրակը
- 4) Սյունիքը

47 ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մետաղաձուլության մասնագիտացված ուղղություններից է մոլիբդենի արտադրությունը:
- 2) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
- 3) Ալյումինի արտադրությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
- 4) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:

48 Ո՞ր մարզում չկա երկաթուղային կայարան.

- 1) Վայոց ձոր
- 2) Շիրակ
- 3) Լոռի
- 4) Գեղարքունիք

49

Արագածոտնի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Տարածքի բարձրաչափական նիշերի մեծ տարբերության պատճառով կլիման բազմազան է:
- 2) Հիմնական ջրային զարկերակը Քասաղ գետն է՝ Գեղարոտ և Ամբերդ գլխավոր վտակներով:
- 3) Հողային ծածկույթում գերակշռում են կիսաանապատային հողերը:
- 4) Ընդերքը հարուստ է հրաբխային ապարատեսակներով:

50

Կոտայքի մարզում բուսաբուծության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.

- 1) հացահատիկի մշակությունը
- 2) պտղաբուծությունը
- 3) բանջարեղենի մշակությունը
- 4) ծխախոտի մշակությունը

51

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Անտառների պահպանմանն ու վերականգնմանն ուղղված միջոցառում է հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը:
- 2) Բուսականությունը մասնակցում է նյութերի և էներգիայի համամոլորակային շրջապտույտին:
- 3) Լուսասինթեզի ժամանակ բույսերը կլանում են թթվածին և արտանետում ածխաթթու գազ:
- 4) Անտառներն ունեն ջրապաշտպան, հողապաշտպան, դաշտապաշտպան, կլիմայաստեղծ նշանակություն:

52

Օդային ավազանի առավել մեծ տեխնաձին աղտոտվածություն ունեցող երկիր է.

- 1) Պորտուգալիան
- 2) Ճապոնիան
- 3) Ավստրալիան
- 4) Բրազիլիան

53

Հետևյալներից ո՞րը հողաբարելավման միջոցառում չէ:

- 1) քարամաքրում
- 2) անտառապատում
- 3) կլիմայավարժեցում
- 4) ոռոգում

54

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բուսական և կենդանական աշխարհը շատ աղքատ է երկրագնդի մերձարևադարձային գոտիներում:
- 2) Ջերմոցային էֆեկտի ուժեղացման հետևանքով բարձրանում է երկրագնդի միջին ջերմաստիճանը:
- 3) Հողերի վատթարացման պատճառ է արոտավայրերի գերարածեցումը:
- 4) Արգելոցը հատուկ պահպանվող տարածք է, որտեղ ամբողջությամբ արգելված է մարդու արտադրական գործունեությունը:

55

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Համաշխարհային օվկիանոսը երկրագնդի մասշտաբով կլիմայի կարգավորիչ է:
- 2) Մարդկային զարգացման համաթվի հաշվարկման գլխավոր բաղադրիչ է տվյալ պետության քաղաքական իրավիճակը:
- 3) Էկոլոգիական աղետալի շրջաններն աշխարհում աստիճանաբար ավելանում են:
- 4) Թույլ զարգացած երկրներին հատկապես բնորոշ է պարենային հիմնախնդիրը:

56

Գրել այն ապարների համարները, որոնք ունեն օրգանական նստվածքային ծագում.

- | | |
|-------------|-----------|
| 1) կրաքար | 5) ավազ |
| 2) խարամ | 6) խճաքար |
| 3) օբսիդիան | 7) տորֆ |
| 4) տուֆ | 8) գնեյս |

57

Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել տեկտոնական ծագում ունեցող լճերի համարները.

- | | |
|-------------|--------------|
| 1) Բայկալ | 5) Վետերն |
| 2) Մեծ արջի | 6) Տանգանիկա |
| 3) Չադ | 7) Աթաբասկա |
| 4) Արալյան | 8) Նյասա |

58

Տրված են ծովային սառը հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|------------------|--------------|
| 1) Բենգելյան | 5) Սոմալիի |
| 2) Լաբրադորյան | 6) Կանարյան |
| 3) Կալիֆոռնիական | 7) Օյա Միո |
| 4) Ֆոլկլենդյան | 8) Պերուական |

59

Գրել այն լեզուների համարները, որոնք չեն մտնում սլավոնական լեզվախմբի մեջ.

- | | |
|--------------|----------------|
| 1) լեհերեն | 5) չեխերեն |
| 2) սերբերեն | 6) սլովակերեն |
| 3) ռուսերեն | 7) շվեդերեն |
| 4) էստոներեն | 8) բուլղարերեն |

60

Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են խոզաբուծությամբ.

- | | |
|--------------|--------------|
| 1) Հնդկաստան | 5) Թուրքիա |
| 2) Ճապոնիա | 6) Ինդոնեզիա |
| 3) Գերմանիա | 7) Պակիստան |
| 4) Իրան | 8) Չինաստան |

61

Գրել այն տարածաշրջանների համարները, որոնք մասնագիտացված են խաղողագործության մեջ.

- | | |
|-------------------------|---------------------|
| 1) Արարատյան դաշտ | 5) Կոտայքի սարավանդ |
| 2) Սյունիքի բարձրլանդակ | 6) Սևանի ավազան |
| 3) Շիրակի դաշտ | 7) Լոռվա սարահարթ |
| 4) Մասրիկի դաշտ | 8) Արփայի հովիտ |

62

Հայկական լեռնաշխարհի տրված գետերի համարները դասավորել ըստ դրանց վտակների վրա գտնվող ջրվեժների հետևյալ հաջորդականությամբ՝ Թորթումի, Շաքիի, Թռչկանի.

- | | | |
|-----------|-----------|----------|
| 1) Փամբակ | 2) Որոտան | 3) Ճորոխ |
|-----------|-----------|----------|

63

Տրված հարթավայրերը դասավորել բարձրության աճման կարգով.

- | | |
|------------------|--------------|
| 1) Մերձկասպյան | 3) Շիրակի |
| 2) Միջինռուսական | 4) Միջագետքի |

(64-65). Լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 340 մմ է, օդի ջերմաստիճանը՝ -6°C , իսկ ստորոտին՝ $+12^{\circ}\text{C}$ (հաշվարկը կատարել 6°-ով).

64 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

65 Որոշել մթնոլորտային ճնշումը ստորոտում:

(66-67) Քաղաքի բնակչության թիվը 80 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 800 մարդ: Եկաճների թիվը 2 000 մարդ է, մեկնաճների թիվը՝ 1500 մարդ.

66 Որոշել միգրացիայի մնացորդը:

67 Որոշել քաղաքի բնակչության թիվը 1 տարի հետո:

68 Երկրի նավթի պաշարները կազմում են 2,4 մլրդ տ, տարեկան հանույթը՝ 80 մլն տ: Որքա՞ն է ռեսուրսաապահովվածությունը:

69

Գերմանիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Գյուղատնտեսությունն աչքի է ընկնում մեքենայացման ու քիմիացման բարձր մակարդակով:
- 2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 3) Արտահանման մեջ գերակշռում են բնական գազն ու նավթամթերքները:
- 4) Տնտեսությունը գտնվում է զարգացման հետինդուստրիալ փուլում:
- 5) ՀՆԱ-ի կառուցվածքում ամենափոքր բաժինը զբաղեցնում է սպասարկման ոլորտը:
- 6) Արդյունաբերության առաջատար ճյուղերից են մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը:

70

ՀՀ Գեղարքունիքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Հողածածկույթում գերակշռում են լեռնաանտառային գորշ հողերը:
- 2) Անասնապահության առաջատար ճյուղն է խոզաբուծությունը:
- 3) Մարզի գյուղերում է ապրում բնակչության մեկ երրորդը:
- 4) Առկա են քրոմիտի և ոսկու պաշարներ:
- 5) Կլիման բարեխառն լեռնային է:
- 6) Տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է: